



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

(1875)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԵՍԻՐ

17 ՅՈՒՆԻՍԻՐ 1875



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՆԱԵՎԻՒՄ Ե. ԳԱՎԱՅԵԱՆ

1875

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ		
1. Թագէտ	Եպիսկոպոս	Բ. 2
2. Գրեգոր	Ա	Բ. 2
3. Խորէն	Ա	Բ. 2
4. Գարեգին	Վարդապետ	Բ. 2
5. Մատթէոս	Ա	Բ. 2
6. Խորէն	Ա	Բ. 2
7. Կարապետ	Ա	Բ. 2
8. Ներսէս	Ա	Բ. 2
9. Ամբրոսիոս	Ա	Բ. 2
10. Հմայեակ	Ա	Բ. 2
11. Յովհաննէս	Ա	Բ. 2
12. Յովհաննէս	Քահանայ	Բ. 2
13. Գեորգ	Ա	Բ. 2
14. Գրեգոր	Ա	Բ. 2
15. Խորէն	Ա	Բ. 2
16. Յարութիւն	Ա	Բ. 2
17. Սիւքիան	Ա	Բ. 2
18. Արիստակէս	Ա	Բ. 2
19.		
20.		
ԱՇԽԱՏԱԿԱՆՔ		
(Ա. Վիճակ)		
Գրական, Կենսիկ փաշա և Գրականայի դուրս		
21. Սենեքերիմ	Մ. Մանուկեան	Բ. 2
22. Պողոս	Ժամակոչեան	Բ. 2
23. Յակոբ	Ֆրէնկեան	Բ. 2
24. Բարթոլոմէ	Քիւրճիպաշեան	Բ. 2
25. Գեորգ	Ստիմարաճեան	Բ. 2
26. Ն.	Ռուսինեան	Բ. 2
27. Պողոս	Պառնասեան	Բ. 2
28. Եսայի	Անուխեան	Բ. 2
29. Մանուկ	Արապեան	Բ. 2
30. Պողոս	Ճերաճեան	Բ. 2
31. Բարսեղ	Հալաճեան	Բ. 2
32. Գրեգոր	Պերպեղեան	Բ. 2
33. Պետրոս	Քերէստեճեան	Բ. 2
34.		
35.		
36.		
37.		
(Բ. Վիճակ)		
Պէտքի թաշ		
38. Կարապետ	Ս. Իւթիւճեան	Բ. 2
39. Յարութիւն	Մարգարեան	Բ. 2
40.		
Երկրագիտ		
41. Համբարձում	Իփեկճեան	Բ. 2
42. Խաչատուր	Ղազարոսեան	Բ. 2
43. Կարապետ	Գ. Փափաղեան	Բ. 2
44.		
Իրականութիւն Ս. Խաչ		
45. Յովակիմ	Ս. Մաղլումեան	Բ. 2
46. Սերգեյ	Պասմաճեան	Բ. 2
47.		
48.		

Իրականութիւն Ս. Կարապետ

49. Ալեքսան	Ստրպեան	Բ. 2
50. Միհրան	Պահճեղափուլեան	Բ. 2
51. Յովհաննէս	Ճերաճեան	Բ. 2
52.		
(Գ. Վիճակ)		
Յերա		
53. Գրեգոր	Սէլիսիճեան	Բ. 2
54. Տերեմի	Մ. Էքսերճեան	Բ. 2
55. Միքայէլ	Մամիկոնեան	Բ. 2
56. Արիկ	Ռուճեան	Բ. 2
57. Ստեփան	Խնդիրեան	Բ. 2
58. Նշան	Քաղաղեան	Բ. 2
59. Մարտիրոս	Յ. Տիւլեան	Բ. 2
60.		
61.		
62.		
Գաղափար փաշա		
Միջագիտ		
63. Յակոբ	Պ. Նորատունկեան	Բ. 2
64. Յակոբ	Կոստանդեան	Բ. 2
65. Տէրան	Եռուստէֆեան	Բ. 2
66. Կարապետ	Պ. Պերեանց	Բ. 2
67.		
Պէտք և Գաղափար		
68. Յարութիւն	Մերեմ-Գուլ	Բ. 2
(Գ. Վիճակ)		
Հարգողներ և Իմաստիկ		
69.		
70.		
Գաղափար		
71. Միքայէլ	Մուրատեան	Բ. 2
72. Կարապետ	Շահպաղեան	Բ. 2
Կարգապետ		
73. Յակոբ	Եւսէնիճեան	Բ. 2
Երկրագիտ Ստեփան		
74.		
Թոփագիտ		
75.		
Էրոստ Ս. Եղիս և Ս. Աստուածածին		
76.		
Գործողներ		
77.		
Հասար և Պոլսի գիտ		
78.		
Կոր գիտ և Ս. Երեմի		
79. Ղազար	Հովսէփեան	Բ. 2
Պաշտ		
80. Միքայէլ	Գ. Իսաեան	Բ. 2
81. Յովհաննէս	Կրճիքեան	Բ. 2
82.		
Գաղափարներ		
83. Յարութիւն	Գ. Տատեան	Բ. 2
84. Յարութիւն	Չէնճիքեան	Բ. 2

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԲ.

17 ՅՈՒՆԻՍ 1875

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԱՏԵՆԱՊԵՏ. — ՅԱԿՈԲ ԿՈՍՏԱՆԴ ԷՖԷՆՏԻ (Գ. Ատնապետ)

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընթերցող՝ Կոստանդիան Պիտի Պատրիարքական հաստատութեան .
2. Ընթերցող իսկ զճնշ մասնաժողովոյ ազգային և քաղաքացիական .
3. Փոփոխելի տրամադրութիւն Ստեփանապոլսեան :

Ատեանը բացուեցաւ ժամն 7 ին ի ներկայութեան 55 երեսփոխանաց, որոց վերջին թիւը 47 ի հասաւ .

Ատեանագրութեան վրայ ի դիտողութիւն հրաւիրեց երեսփոխանները :

Իփեկճեան Հ. ԷֆէնՏի. — 159 երեսին Բ. սիւնակին մէջ կաթողիկոսական և Պատրիարքական յարաբերութեանց Յանձնաժողովի մասին նախկին գրաւոր առաջարկութեանց մէջ հարցում մ'ըրաւ ըլլալս յիշեր և կրկնեց ինչի Ի պատասխան Ատեանագրութեան ըսաւ թէ պէտք է նշան ընտրել ինչի Ի յարցումը : Ասի մտոցուած է ատեանագրութեան մէջ :

141 երեսին Բ. սիւնակին մէջ գրուած է թէ « ուրիշ երեսփոխանք ալ Տ. Խորէն սրբազանին ձայնակցելով բողոքեցին Իփեկճեան էֆէնՏի խօսքերուն դէմ » : Բայց չէ գրուած թէ ինչ պատճառով չէ ընտրուել ինչի Ի :

Բացուեցին էնտար ինչ : Ասոր ապացոյց է եռուստէֆեան էֆէնՏի սա խօսքը թէ « Ես ալ արդէն խօսք ուղած եմ եւ Իփեկճեան էֆէնՏիին դէմ խօսելիք ունիմ . բայց պիտի սպասեմ մինչեւ կարգս դայ խօսելու » :

Նոյն էջին և նոյն սիւնակին մէջ քիչ մը վարը խօսքս մասնաւորապէս Քրիստոստուր էֆէնՏիին ուղղուած էր, յորում ըսած էի թէ Բացուեցին էնտար ինչ : Բայց ոչ զարգացելու :

142 երեսին և Ա. սիւնակին մէջ ըսուած է թէ « Տ. Խորէն Սրբազան խորէն ոտք ելաւ և առաւ քաղեց ըսելով . — Այդպիսի սինթոր խօսքեր չեմ կրնար ընդունիլ և փոխադարձ պատասխանել » : Ծանր խօսք մ'էր այս զոր Խորէն եպիսկոպոս ըսաւ, և որ չէր կրնար կիրք չը հանել . սպասեցի որ Ատեանագրութեան անոր պատասխանը տայ, և երբ չը տուաւ, ստիպուեցայ նոյն պահուն պատասխանել Խորէն սրբազանին թէ « Ինչի Ի ինչի Ի ինչի Ի » : Եւ անկէ ինչի Ի ինչի Ի : Այս խօսքս արձանագրուած չէ :



ԻՌԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Վարչական խորհրդոց եւ Հոգաբարձութեանց համարատուութեան տեղեկագրերը Նախագահին ղրկանաց յըզուած ժամանակ կը յիշեմ որ տեղեկագիր մը դուրս մնացած է. այն է՝ նախորդ Կրթական խորհրդոց տեղեկագիրն՝ որ սպեալ յանձնուած է ժամանակին Վարչութեան 1870—71 թ Վարչութեան Կրթական խորհրդոց տեղեկագիրն է ըսածս, այն Կրթական խորհրդոցն՝ որուն ես ալ անդամ գտնուած եմ, եւ որ նոյն տեղեկագրով իւր փորձառութեանց արդիւնքը բերած է. դժբաղդաբար այն տեղեկագիրն խօսքը չը լսուիր:

ԱՏԵՆԱՂԵՏ ԷՖ. — Այն տեղեկագրերն՝ որ պատրաստ եկած հասած էին Գիւտնին վրայ, ամենն ալ յըզուած են Նախագահին ղրկանաց, որոնց մէջ է նաեւ ձեր յիշած տեղեկագիրը. մինչեւ իսկ ետ մնացած համարատուութեան տեղեկագրերն ալ պահանջուած են, որպէս զի անոնք ալ նախագահութեան յանձնուին ժողովին որոշմամբ:

Ատենապետ էֆէնտին քուէի գրաւ Կալուածոց ղրկանին բերած տեղեկագիրը, եւ ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ յաջորդ նիստին Օրակարգն անցընել զայն:

Երրորդ Ատենապետ էֆէնտին ժողովին ներկայեց Վարչութեան Քաղաքական ժողովոյ կողմէն եկած նոր երեսփոխանական ընտրութեանց վերաբերեալ տեղեկագիրը, որ կարգացուեցաւ, եւ անաւասիկ պատճէնը:

Վսեմաշուք Ատենապետ Պէյ

Ազգային երեսփոխանական ժողովոյ.

Ղուղղունճուխի եւ Իճատիէի միացեալ թաղից հրաժարեալ երկու երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութեան համար Ընտրողական ժողովն ըստ Սահմանադրութեան ընտրական գործողութեանց ձեւնարկելով, իւր տեղեկագրովը կը յայտնէ թէ միացեալ թաղից 103 ընտրողներէն 32 ին մասնակցութեամբ երեսփոխան ընտրուած են:

Ստեփան էֆ. Պէյլիկճեան 25 քուէով  
Յովհաննէս էֆ. Էսաեան 20 » :

Էյուզի Ս. Աստուածածին եւ Ս. Եղիա միացեալ թաղից հրաժարեալ մէկ երեսփոխանին տեղ նորոգ ընտրութեան համար Ընտրող. ժո-

ղովն ըստ Սահմանադրութեան ընտրական գործողութեանց ձեւնարկելով, իւր տեղեկագրովը կը յայտնէ թէ միացեալ թաղից 103 ընտրողներէն 28 ին մասնակցութեամբ երեսփոխան ընտրուած է:

Գառնիկ էֆ. Մելիքեան 24 քուէով:

Սամաթիոյ Եէնի մահալլէի թաղին հրաժարեալ մէկ երեսփոխանին տեղ նորոգ ընտրութեան համար Ընտրող. ժողովն ըստ Սահմանադրութեան ընտրական գործողութեանց ձեւնարկելով իւր տեղեկագրովը կը յայտնէ թէ թաղին 29 ընտրողներէն 17 ին մասնակցութեամբ երեսփոխան ընտրուած է:

Օղսէն էֆ. Խօճասարեան:

Նաեւ Կեսարիոյ վիճակէն ուղուած մէկ գաւառական երեսփոխանի մը համար յիշեալ վիճակի Գաւառ. Ընդհանուր ժողովն ըստ Սահմանադրութեան ընտրական գործողութեանց ձեւնարկելով, իւր տեղեկագրովը կը յայտնէ թէ գաղանի քուէարկութեամբ եւ քուէից բացարձակ առաւելութեամբ երեսփոխան ընտրուած է:

Մատթէոս էֆ. Այվատեան:

Սահմանադրութեան Գործադիր յանձնաժողովը սոյն ընտրութեանց օրինաւորութիւնն ստուգած ըլլալով, Քաղ. ժողովս արժան գատեց տեղեկագրովս ներկայացնել Ազգային ժողովոյց ի վաւերացումն, յաւելցնելով նաեւ թէ վերոյիշեալ ընտրելոց յանձնառութիւնն ազահովուած է. բաց ի Կեսարիոյ վիճակէն ընտրուած երեսփոխան Այվատեան Մատթէոս էֆէն, որ պատճառաբանութեամբ կը հրաժարի իւր ընտրութենէն, եւ որոյ հրաժարագիրը կը մատուցանեմք Ազգային ժողովոյց ի պարտապատշաճ տնօրէնութիւն:

17 Յունվար 1875  
Արեւուդուլի Կան Արեւուդուլի  
Մ. ՄԱՏԻՎՈՆՅԱՆ Տ. Գ. ԿՈՍՏԱՆԿ

Ատենապետ էֆէնտին հրաւիրեց երեսփոխաններն այս ընտրութեանց մասին ղրտողութիւն եթէ ունին ընել:

ՄԱՐԳԱՐԵԱՆ Յ. ԷՖ. — Սահմանադրութեան ընտրական գործողութիւնք կ'սկսին ընտրողական ժողովէն: Թաղական խորհուրդը թաղին երեւելիները կանչելով կը կազմէ ընտրողական ժողովը: Կ'առաջարկեմ որ դոնէ 10 տարու ընէ

ի վեր թաղին մէջ քնակութիւն ունեցող անձինքը կոչուին եւ չէ թէ 2-3 օրուան հիւրերը, զի այս կերպով շատ անգամ եղած ընտրութիւններն արտաքոյ կարգի կ'ըլլան: Գալով երեսփոխան ընտրուած անձանց, կ'առաջարկեմ որ ընտրութեանց վաւերացումէն առաջ հարցուի անոնց, եւ երբ գրով հաճութիւնն յայտնեն՝ այն ատեն վաւերացումը կատարուի, որպէս զի մեք վաւերացնելով եւ անոնք հրաժարելով անօգուտ ժամավաճառութիւններ չըլլան:

ԱՏԵՆԱՂԵՏ ԷՖ. — Այդ վերջին կէտը ժողովին Կանոնադրութեան մէջ ազահովութեան տակ առնուած է արդէն. եւ եկած տեղեկագիրն ալ ընտրելոց յանձնառութիւնը կ'ազահովէ:

ՄԱՐԳԱՐԵԱՆ Յ. ԷՖ. — Կ'առաջարկեմ նաեւ որ նոր ընտրեալ երեսփոխան մը գոնէ 2 անգամ ժողովոյ նիստերուն ներկայ գտնուելէն ետեւ հրաժարի, թէ որ հրաժարելու ղրտաւորութիւն ունի:

ԱՏԵՆԱՂԵՏ ԷՖ. — Կը յիշեցնեմ որ Կանոնադրութեան 617. յօդուածին համաձայն առաջարկութիւնները գրաւոր պէտք է ըլլայ:

Ուրիշ ղրտողութիւն ընող չըլլալով Ատենապետ էֆէնտին տեղեկագիրը քուէի գրաւ, եւ ժողովն ՎԱԻԵՐԱՅՈՒՅ կատարուած ընտրութիւնները:

Ատենապետ էֆէնտին երեսփոխան հռչակեց

Ստեփան էֆ. Պէյլիկճեան  
Յովհաննէս էֆ. Էսաեան  
Գառնիկ էֆ. Մելիքեան  
Օղսէն էֆ. Խօճասարեան  
Մատթէոս էֆ. Այվատեան

Նորընտիր երեսփոխան Այվատեան Մատթէոս էֆէնտին պատճառաբանեալ հրաժարագիրը կարդացուեցաւ, եւ անաւասիկ պատճէնը:

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր, Նախագահ Ազգային ժողովոյ.

Ասկէ առաջ Մայր եկեղեցւոյ թաղէն ընտրուած ազգային երեսփոխան էի. պայմանաժամս չլրացած՝ հրաժարականս մատուցի Ազգային ժողովոյ անցեալ յուլիս 6 թ նշանաւոր նիստին, նախատեսելով այն անյաջող փորձը որ փորձուեցաւ նոյն նիստին դէմ, եւ որ հետեւանք էր մինչեւ ցայն օր Ազգային ժողովոյ եւ անոր պաշտպան երեսփոխանաց պատուոյն դէմ

հրատարակուած յարձակմանց ու թշնամանաց անպատիւ մնալուն:

Այս անգամ, Կեսարիոյ Գաւառական ժողովը՝ իր թիւ 66 եւ նոյեմբեր 21 նամակաւ, եւ Ձեր Սրբազնութիւնը՝ Ձեր թիւ 21 եւ ղեկտեմբեր 14 նամակաւ կը ծանուցանէք, թէ օրինաւորապէս վերստին ազգային երեսփոխան ընտրուած եմ Կեսարիոյ վիճակէն. բայց ես դարձեալ կը հրաժարիմ. եւ սակայն այս անգամ արգելք չեմ տեսներ բացայայտ գրել, թէ ինչ է հրաժարմանս բուն պատճառը:

Սրբազան Հայր, եթէ մեր Ազգային երեսփոխանական ժողովը՝ մեր ազգային իշխանութեան ազգիւրն ու ղերադոյն հեղինակութիւնն է, եւ այս հեղինակութիւնը՝ մեր ազգայնութեան հանդոյցն ու երաշխաւորութիւնը, բանաւոր աշխարհի սկզբանցն համեմատ իրբեանկէ ծագած մարմիններ՝ գործադիր իշխանութիւնը եւ ազգային վարչութիւնը առաջին պարտաւորութիւն ունի սոյն գերագոյն հեղինակութեան ամբողջութեանը եւ կամ զայն բաղկացընող երեսփոխանաց պատիւը խափա պաշտպանել, եւ անոնց դէմ եղած որ եւ է անիրաւ յարձակմանց, թշնամանաց ու գրպարտութեանց հեղինակներն ու հրատարակիչները անմիջապէս յատեան կոչել եւ իրենց մեղապարտութեան աստիճանին համեմատ պատժել. եւ այս սկզբունքը այնչափ ճշմարիտ եւ անոր ճշդիւ գործադրութիւնը այնչափ անհրաժեշտ է մանաւանդ մեր Ազգին համար, որչափ իրաւ է՝ որ քաղաքական եւ կրօնական օտար շահերէ շրջապատեալ ազգ մը ըլլալով մեր ազգը, հակազգային բաղամթիւ շահուց ուղղակի եւ անուղղակի գործիք եղած յայտնի ու գաղանի տարրներ կը պարունակէ իր մէջը. տարրներ որ ժամանակէ մը ի վեր իրենց անիրաւ յարձակմանցն ու թշնամանացը կէտ նպատակի ընտրած են միմիայն երեսփոխանական ժողովոյ մէջ՝ ի նպատակ ազգային շահուց կարծիք յայտնող երեսփոխանները, եւ կամ նա մանաւանդ աւելի ճիշդ ըսելով՝ նոյն իսկ ազգային երեսփոխանութեան գոյութիւնը, եւ որոց այս նուիրը՝ կրնայ բարիք չբերել, նա մանաւանդ չարիք բերել Ազգին:

Թէեւ իմ առաջին հրաժարականսս պատեհ չհամարեցի յայտնել, թէ հրաժարմանս բուն պատճառը՝ այդ անիրաւ յարձակմանց ու

Թշնամանաց հեղինակ ու գործադրիչ գանուող կարգ մը անձանց անպատիվ մնալն է, բայց չեմ կրնար չյայտնել այս անգամ, երբ կրկին ի պաշտօն երեսփոխանութեան կը կոչուիմ հայ-ունիքս գանուած մեծ դատաւի մը կողմէն, որուն զգացումներն ըստ ամենայնի իմ զգացմանցս հետ նոյն ըլլալուն անտարակոյս եմ, եւ իմ այս ընտրութիւնս բաղկացուցիչ մասն կը համարիմ այն հանրային ջերմ համակրութեան եւ ցոյցերուն, որ ցուցուելու վրայ են ազգային շահուց ի նպատակ խօսող եւ գործող երեսփոխանացս, առ հասարակ ամէն կողմէն, հակառակ այն ամէն խարէական, սուտ ու չարամիտ հրատարակութեանց եւ կեղծ ու չինծու հանրագրութեանց, որ նիւթեցին այն կարգ մը անձինքը, եւ որովք անուանարկել փորձեցին զիս եւ իմ պաշտօնակիցներէս գոմանս, մեր պաշտօնական գրիցը մէջ եւ հրապարակի վրայ:

Իրաւ, ազգային գործադիր իշխանութիւնը եւ ազգային վարչութիւնը ի սկզբան կրկին եւ կրկին պաշտօնական ծանուցմամբք զմեզ անուանարկելու փորձ փորձել ուղղները հրաւիրեց, որ եթէ բանաւոր փաստ եւ իրականութիւն ունին ձեռքերնին, գան պաշտօնապէս ամբաստանեն զմեզ եւ դատի մասնն մեզի դէմ, եւ եթէ չգան խտրել պիտի պատժուին. բայց յետոյ՝ երբ այդ հրաւիրն ընդունող չզանուեցաւ, գործադիր իշխանութիւնը եւ ազգային վարչութիւնը՝ ըստ հետեւանաց իր պաշտօնական ծանուցմանց եւ ըստ իւր անհրաժեշտ պարտաւորութեան, այդ խօսվայոյզ անձինքը, մինչեւ ցարդ, իրբեւ զրպարտիչ եւ խոտովիչ պատժելու պարտքը չմտարելուն համար, անոնք աւելի եւս խրախոյս առնելով, հրատարակի մէջ մեզի դէմ իրենց չարամտութեան փորձերն եւս քան զեւս բազմապատկեցին միամիտներ խաբելու համար միայն, ինչպէս է Մասիսի խմբագիր Իւթիւճեան կարապետ էֆէնտին, որ ազգային երեսփոխան ըլլալովը՝ մինչդեռ ամէն գիւրութիւն ունէր զմեզ Ազգային ժողովոյ առաջը պաշտօնապէս ամբաստանելու, առանց անգամ մը սոյն օրինաւոր միջոցին զիմել համարձակելու, ի սկզբանէ ի վեր իր թերթը այդ կարգի անձանց գործիք եւ արձագանք ըրած, չարունակ ամէն ապօրինաւոր միջոց գործածելով, ամէն վաստէ զուրկ բազմաթիւ ստութիւններ

ու խաբէութիւններ հրատարակելէ զատ, իր վերջին թիւերովը գործը մինչեւ այն ստորձան անօրատկառութեան եւ աներկիւղութեան հասցուց, որ մեզի դէմ հրատարակած այն բազմաթիւ սուտ ու չինծու խաբէութիւններուն մէջ, մինչեւ իսկ զմեզ Վեհ. կաթողիկոսին կոչումը՝ Երուսաղէմայ Ա. Պատրիարքին Գրեթիւնը եւ այլն կոչելու զրպարտութիւններուն ալ յանդգնեցաւ, եւ ցաւօք կրեմ, Արքայան Հայր, Գործադիր իշխանութիւնը եւ Ազգային Վարչութիւնը զարձեւալ անտարբեր մնաց. մինչդեռ այս տեսակ պարտադաններուն մէջ անհատական դատախազութեան սպասելու պէտք չկայ:

Իրաց այս վիճակին մէջ, Արքայան Հայր, ինձի պէս երեսփոխան մը, իր երեսփոխանական պարտաւորութիւնը կատարելու համար օր ու ժամ զոհելէ զատ, խղճի մտօք եւ ի նպատակ ազգային շահուց կարծիք յայտնելուն պատճառաւ կրկինք յարձակմանց ու թշնամանաց առթիւ այդ կարգի անձանց դէմ Վարչութեան ու Բ. Իրան առջեւ դատ բանալու եւ այդ տեսակ ինչորոց վրայ զեզերելու համար ալ օր ու ժամ զոհել պարտաւորելով, եւ իմ անյնչեւ զբողոցս զանրութիւնը՝ այդ ծանրածանր զոհողութիւններն ընել ամենեւին չներելով, անկարելի է ինձ իմ երեսփոխանական պաշտօնս ընդունել:

Ուստի կը խնդրեմ Ձեր բարձր Սրբազնութեանէն, որ բարեհաճիք սոյն հրատարակիրս մատուցանել Ազգային երեսփոխանական պատկառելի ժողովոյն, որպէս զի վերահասու ըլլայ նա միանգամայն զիս կրկին անգամ հրաժարիլ հարկադրող բուն եւ բանաւոր պատճառին:

Մնամ Ձերդ Բ. Սրբազնութեան եւ Ազգիս  
16 Յունվար 1875 Անձնանուէր ծառայ  
Բերա ՄԱՏԹԻՈՍ Մ. ԱԶՎԱՏԵԱՆ

Ատենապետ էֆէնտին այս հրատարակիրն Իրաւասութեան գիւանին յղելի լինելի մ'ըլլալը յայտնելով պարտաւորեցաւ քուէի դնել:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Անձնական դէպի վերաբերեալ կէտի մը համար խօսք ունիմ: — Այս հրատարակիրն մէջ իմ անունս յիշուած է. Այլատեան էֆէնտին կերպով մը բողոք կ'ընէ ինձ դէմ. բողոքը դատի մը յառաջարկման է, երբ բողոք կ'ընէ պէտք է դատ վարէ: Ուստի

այդ հրատարականը գրող անձին իմաց տալու է որ փոխանակ վերացեալ խօսքերով ժողովն զբաղեցնել ուղղուէ, թող դատաստան պահանջէ եւ դատ վարէ ինձ հետ:

Ատենապետ էֆէնտին Այլատեան էֆէնտին հրատարականին յղումը քուէի դրաւ, եւ ժողովը միաձայնութեամբ ԱՐՈՇԵՑ Իրաւասութեան գիւանին յղել:

Չորրորդ՝ Ատենապետ էֆէնտին ժողովոյն ներկայեց Իւթիւճեան կարապետ էֆէնտինին կողմէ մատուցուած գրաւոր մէկ առաջարկութիւնը, որ ահաւասիկ:

«Ա՛ռաջարկեմ որ երեսփոխանութեան պայմանաժամը չաւարտած՝ կամովին հրատարական տուող երեսփոխանաց վրայ վերստին ընտրութիւն չըլլայ, դոնէ առանց տարի մ'անցնելու, որովհետեւ հրատարուած հարկաւ առանց բանաւոր սրտածառի չկրնար ըլլալ եւ այն պատճառն ալ չկրնար անմիջապէս դադրիլ:

17 Յունվար 1875 Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Ատենապետ էֆէնտին այս առաջարկութեան Նախաձեռնութեան գիւանին յղելի լինելը՝ մ'ըլլալը յայտնելով, պարտաւորեցաւ քուէի դնել:

Ոճանք յերեսփոխանաց առաջարկութեան իմաստը լաւ ըմբռնած չըլլային յայտնելով, Գիւանը հրաւիրեց Իւթիւճեան էֆէնտին համառօտի լուսարանել իւր առաջարկութիւնը:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Երբ երեսփոխան մը պաշտօնավարութեան միջոցին իւր պայմանաժամը չըլլացած կը հրաժարի, ի հարկէ բանաւոր պատճառ մը ունեցած ըլլալու է այս կերպիւ հրատարուած կ'ենթադրէ թէ կամք չունի նա երեսփոխանական պաշտօն վարելու. քանի որ հրատարման պատճառը դադրած չըլլար մէկէն ի մէկ, անմիջապէս նորէն ընտրուիլն ալ անտեղութիւն մ'է, եւ այդ վերըստին եղած ընտրութիւնը մերժուելու ենթակայ կ'ըլլայ. քանզի պատճառը կեցած տան վերըստին ընտրութեամբը դադրած չըլլար այն, եւ պէտք է որ ժամանակ մը անցնի. անոր համար կ'առաջարկեմ որ այսպիսի հրատարման պարտադան մէջ հրատարեալն ով որ է՝ վերստին ընտրուելու համար գոնէ տարի մը ժամանակ

անցնի, որպէս զի իւր հրատարման պատճառն ալ դադրած ըլլայ:

Այս բացատրութենէն ետեւ Ատենապետ էֆէնտին քուէի դրաւ. ժողովն Յ քուէի դէմ նոյն առաջարկութիւնը Նախաձեռնութեան գիւանին յղել ԱՐՈՇԵՑ:

Հինգերորդ՝ Ատենապետ էֆէնտին կանոնադրական ինչ ինչ գիտողութեանց համար Իւթիւճեան էֆէնտինին խօսք խնդրած ըլլալը յայտնելով, հրաւիրեց ժողովն անոր գիտողութիւնները լսելու:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կանոնադրութեան 227 յօդուածին համաձայն խնդրոյ մը վրայ ատենաբանը փոխադարձ կարգով պէտք է խօսին թեր ու դէմ. այսինքն թեր խօսողի մը ետեւէն չը գար անմիջապէս ուրիշ թեր խօսող մ'ալ, այլ դէմ խօսող մը պէտք է յաջորդէ: Նախընթաց երկու նիստերուն մէջ այս յօդուածին տրամադրութիւնը չը յարգուեցաւ եւ անոր հակառակը գործադրուեցաւ. որովհետեւ դէմ խօսողի մը ետեւէն 2-3 թեր խօսողներ յաջորդեցին: Ուստի Գիւանին ուշադրութիւնը կը հրաւիրեմ այս պարտադան վրայ, որպէս զի ուրիշ անգամ կանոնադրութեան նոյն յօդուածին տրամադրութիւնը պահպանելու եւ յարգել տալու հոգ տանի: Ստոյգ է որ կանոնադրութեան 267 յօդուածն առաջարկութեան մը հեղինակին կամ տեղեկագրերին իրաւունք կուտայ ուղղակի չափ խօսելու. բայց այս յօդուածը պատճառ չը կրնալ ըլլալ միւս 227 յօդուածն եղծանելու, եւ պէտք է որ 227 յօդուածն անեղծելի պահուի միշտ:

Նոյնպէս կանոնադրութեան 267 յօդուածին համաձայն որ եւ է ընդմիջում, որ եւ է անձնականութիւն եւ բեմական բարբառի անվայել որ եւ է բառ կամ բացազանչութիւն արգիլեալ է եւ աններելի: Ասոր դէմ ալ մեղանշուեցաւ նախընթաց նիստին մէջ. Գիւանն ամենեւին ազգարարութիւն անգամ չըրաւ այս մասին. իմ միտքս բողոքել չէ, այլ միայն կանոնադրութեան յարգուիլը եւ գործադրուիլը պահանջել է, եւ այս իմ պարտքս է:

ՅՅ7 յօդուածին համաձայն պէտք է ի կարգ կոչուի այն ատենաբանն որ կարգէն խոստորի, այն անգամն որ 287 յօդուածին պատուէրը չը պահելով որ եւ է կերպիւ բարեկարգութիւնը

խանդարելու պատճառ լինի : Եթէ այս կանոնադրութիւնն իբրև խաղալիկ գործածելու համար չենք ընդունած , այլ արդարութեամբ եւ խղճի մտօք կատարելու համար , պէտք է ըսեմ որ այս ի կարգ կոչման արամադրութիւնն ալ անգործադրելի մնաց նախընթաց նիստին մէջ եւ անկարգութիւն ընողներն առանց արդարութեան մնացին : Յաւելով կ'ըսեմ թէ Գիւանն իրաւունք չունի աչառութիւն ընել հոս . այս ժողովին մէջ Սրբազան Նախագահն ալ ի միասին առնելով ամենքս ալ Ազգին հաւասարապատիւ երեսփոխաններն ենք , թէ եւ կեղեցական եւ թէ աշխարհական խտիր չունին իրենց երեսփոխանական պաշտօնին մէջ , որչափ ալ մեծ ըլլայ մէկը : Գիւանը պէտք է հոս դատախազ ըլլայ ոչ անոր անձին՝ այլ անոր երեսփոխանական պատւոյն համար :

Գարձեալ՝ կանոնադրութեան 1027. յօդուածոյն 3 եւ 4 պարբերութեանց արամադրութեանց նայելով , ցաւով կ'ըսեմ որ անցեալ անգամ Խորէն սրբազան այդ արամադրութեանց դէմ վարուեցաւ , ժողովին մէջ ազմկայոյզ տեսարան մը յարուցանելու նախաձեռնեց եւ իր պաշտօնակցին դէմ նախատինք եւ գրգռիչ ըսպանալիք ուղղեց . բայց Գիւանն անտարբեր մնաց ու իր պարտքը չը կատարեց : Խորէն կ'ըսեմ . եթէ իբրև խաղալիկ պիտի գործածուի այս կանոնադրութիւնը , աններելի է այդ . չէ՛ թէ որ իբրև պարտաւորութիւն խղճի մտօք պիտի յարգենք ու գործադրենք , պէտք է որ Գիւանն իւր ուշադրութիւնը դարձնէ այս պարտաներուն վրայ , եւ առանց որ եւ է երեսփոխանի մը սոյն ժողովէն դուրս ունեցած զիրքն ի նկատի առնելու , հոս յարգել տայ կանոնադրութեան այն յօդուածները՝ որով ժողովոյս բարեկարգութիւնն ապահովուած է :

Կը վերջացնեմ իմ գիտողութիւնս կրկնելով թէ հոս այս ժողովին մէջ ամեն երեսփոխան թէ կեղեցական եւ թէ աշխարհական , հաւասարապատիւ են , եւ պէտք չէ որ Գիւանը խարտութեամբ կամ ակնաւորութեամբ վարուի ոչ մէկին եւ ոչ միւսին հետ . եւ եթէ Գիւանն այսպէս չը վարուի՝ իւր պաշտօնին մէջ զանցառութիւն ըրած կ'ըլլայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Ձեր այդ գիտողութիւնները նախընթաց նիստին կը վերաբերին եւ անոր մէջ պէտք էր ընելիք . հիմա միայն կ'արձանագրուին :

**ԸՆԹԵՐՑՈՒՄ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԵՐԱՌԻ**

**ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ**

Ատենապետ էֆէնտին Օրտկարգին անցնելով , հրաւիրեց Պատրիարքական Փոխանորդ Հայրը , որ ժողովին բերէ կայսերական Պէրաթը : Երբ Փոխանորդ Հայրը Պէրաթը դարդարուն ափսէի մը վրայ դրած բերաւ , Սրբազան Նախագահն եւ բոլոր ժողովակաւոր տաքի ելան , ընդ որս եւ հանդիսական ժողովուրդը . եւ Ատենապետ էֆէնտին խոնարհելով առաւ Պէրաթը եւ համբուրելով բացաւ , եւ յանձնեց Գիւանազ պիւր կարապետ էֆէնտինին , որ բեմն կ'ըլաւ եւ ի լուր ամենեցուն կարդաց : Ահաւասիկ պատճէնը :

**ՄՈՒՃԻՊԵՆՃԻ ԱՄԷԼ ՕԼՈՒՆԱ**

Ըսթանպօլ վէ թէվապի Երմէնի Պաթրիկի պուլունան Մկրտիչ Եպիսկոպոսըն իսթիֆասը վուգուլնէ մէպի՛ի՛ եերինէ ախտրինին թայինն՝ միւթէպլիք օլան էմր ու իրատէի սէնիյէի ՄԻԻԼԻԲԵԱՆԵՄ մուգթէղասընտան օլտուղընտան մուէէս օլան ինթիխապ նըզամը մուճիպինճէ Երմէնի միւլէթի միւթէպէրանընտան լաղըմ կէլէնէր ուսուլի վէճնէ Պաթրիկխանէտէ պիթթէճէմիւ՛ Իզիտ Մէրխաստը օլուպ Պաթրիկ Գայիմագալըղընտա պուլունան իշպու տարէնաէի Պէրաթը ՀԻԻՄԱՅԻՆԵՐՄ Վարժապետեան Ներսէս Եպիսկոպոս ճիւմէ մարիֆէթի իլէ Պաթրիկիկէ ինթիխապ օլունմուշ օլտուղընտան իճրայի մէ՛ մուրիյէթի խուսուսը պա մահզարը ումուսի իսթիտա վէ նիսոզ օլունմագտան նաշի քէյֆիյէթ թարաֆը էչրէֆի ՓԱՏԵԱԶԱՆԵՄՏԷՆ լէտւլ արդ , օլ վէճն իլէ իճրասը խուսուսընա իրատէյի Սէնիյէի ՄԻԻԼԻԲԵԱՆԵՄ թէալիւղլէ օլ պապտէ իշպու պին էքի եիւզ տօղսան պիր սէնէսի Բէպիւլ էվէլինին իկիրմի պէչինճի կիւնիւնտէ ինայէթ էֆղայի սուլունճ վէ սուսուր օլան էմրը ՀԻԻՄԱՅԻՆԵՐ Շէվքէթմագրունը ՓԱՏԻՇԱԶԱՆԵՄ միւճիպինճէ իճայը իճրա գըլընմըջ օլմագին՝ մէ՛մուրիյէթիննի միւթէղամիլն Տիվանը ՀԻԻՄԱՅԻՆԵՐՄՏԱՆ գիքրի աթի շէրայիթ տէրճ իլէ պալեսար Եաթթը ՀԻԻՄԱՅԻՆԵՐ ՇԱԶԱՆԵՄԼԷ միւվէչչահ եէաինէ իշպու Պէրաթը ՀԻԻՄԱՅԻՆԵՐՄԸ վիրտիմ վէ պուլուրտըմ քի , Միւմաիլէյն Վարժապետեան Ներսէս Եպիսկոպոս Ըսթանպօլ վէ Անաթօլը վէ

Բումէլի վէ թէվապի Երմէնի Պաթրիկիկինէ միւթէպարը՛՛ օլուպ՝ Պաթրիկի օլտուղու Գալմըն Գալմանինի Մէզնէպիյէսինէ մուղայիր հաբաքէթի՛ վէ խիլաֆը Նիղտմաթը մէվղուէ թէատտիեաթ վէ մէզալիմի վէ ՏԷՎԼԷԹԸ ԱԼԻՅԷՄԷ խըեանէթի զուհուր իթմէտիքճէ վէ պիղգաթ իսթիֆասը վուգու պուլմատըգճա մատամ իւլ հաեաթ ազլ օլունմաեա , վէ շու թմատա օլունան մէվատտէն պիրի իլէ ինֆիսալի իղթիլգա իթտիքաէ՛ Նիղամնամէտէ մուհարրէր գուլուտ վէ շուրութէ միւվաֆըզ վէճնէ տավրանըլա . վէ Պաթրիկիկինէ թապի եերլէրտէ օլան Մէրխասալէր վէ Փախասլէր վէ Երմէնի միւլէթի՛ Եպիսկոպոսը Միւմաիլէյնի իւղէրլէրինէ Պաթրիկ պիլուպ՝ Պաթրիկիկինէ միւթէալիլգ ումուրլէրինտէ քէնտույէ միւրաճէաթ իտուպ հէր վէճն իլէ իթաաթ վէ ընդըեատ իաէլէր . վէ Պաթրիկիկինէ թապի եերլէրտէ ազլ ու նասպէ միւլթէհազ օլան Մէրխասալարը վէ Փախասլարը վէ Գարապաչլարը Պաթրիկ Միւմաիլէյն՝ այինլէրի իւղրէ ազլ ու նասպ իլլէտիքաէ ախտրէն քիմէանէ միւտախէլէ իլլէմէյէ . վէ Մէրխասալէրտէն պիրինին թէպալիլ լաղըմ կէլալիքաէ՛ Պաթրիկը Միւմաիլէյնին վէ Միլլէթ Մէճիսիննի միւրլէրի իլէ մէմուր թագրիլ թագտիմ օլունուպ շուրութը տէրճ իլէ եէաինէ Պէրաթը Ալիշա նըմ վիրիլուպ մարուղաթը սայիրէ իլէ հիշ քիմէանէյէ Մէրխասալըզ թէվճի՛ օլունմաեա . վէ իշպու Մէրխասա վէ Եպիսկոպոսարըն ազլ ու նէֆի վէ սույի հալիննի միւշիւր՝ Փաշալէրտէն վէ Գասրլէրտէն վէ Նայիպլէրտէն արդ կէլուպ թէչէքքի օլունտուգաէ՛ սընէթի Պաթրիկը Միւմաիլէյնտէն իսթիլամ օլունմատըգճա ըսգա օլունմայուպ պիր թարիկ իլէ վէ մուղատտէմ վէ մուախսէր թարիխ իլէ ֆէրման տախի սասըր օլուր իսէ իթիպար օլունմաեարագ պիթթահիլգ իճայը իճրա օլունա . վէ Մէրխասա վէ Եպիսկոպոսարտան պիրի լի էճիւլ մասլահա Տէր Սասաթթիմէ կէլուպ եերինէ ախտրա հիլի թէվքիլ իտէր իսէ քիմէանէ մուխալիֆէթ իլլէմէյէ . կէրէք քէնտուսընըն վէ կէրէք Մէրխասալէր վէ սայիր Փախասլէրն խանէ վէ մէսքէնլէրինտէ պէր վէճն սէրպէսթի իճրայի ային իլլէմէլէրինէ վէ պունա միւթէֆէրը օլան ֆիլլէրինէ քիմէանէ թարաֆընտան տախ ու թէարրուզ վէ միւաախէլէ օլունմաեա . վէ գաախմէն պէրու գապթ ու թէսարըրլէրինտէ օլան ֆիլիսէ վէ Մանասթըրլէրինէ վէ Տէր Սաա-

աթթիմտէ վէ կէրէք տաշրա մահալլէրտէ օլան զիարէթ կեանլէրինէ վէ մէյթլէրիննի ուսուլը միւթատէլէրի իւղրէ գալարմագա վէ սայիր իճրայի այինլէրինէ քիմէանէ միւմանէաթ իլլէմէյուպ Պաթրիկը Միւմաիլէյնին վէ Միլլէթ Մէճիսիննի միւրլէրի իլէ մէմուր թագրիլլէրի միւթէպէր թութըլարագ այինլէրինէ միւթէալիլգ հէր նէ քի արդ վէ ինհա իտէրլէր իսէ միւսաստէ օլունա . վէ Միլլէթի մէրգուլէյէ մախսուս օլան ֆիլիսէ վէ Մանասթըրլէրի պիլա էմրը շէրիֆ քիմէանէ թէֆթիլ վէ թէֆէխուս իթմէյուպ վէ վաղը գատիմի վէ ուսուլի միւթէպէրէսի իւղրէ վաղը օլան թամիր ու թէրմիլլէրինէ մուխալիֆէթ գըլընմաեա . վէ պու մագուլէ գատիմ ֆիլիսէլէրի մարուղաթ վէ միւրասլաթ իլէ ախտրէ վիրիլմէյէ , վէ ախտրին տէյնի իլիւն ֆիլիսէ վէ Մանասթըրլարըն էչեասընա թէարրուզ օլունմայուպ ըէնն օլմագ իւղրէ ախոզ վէ գասպ իթալիլմէյէ , վէ պիր թագրիպ ախոզ օլունմուշ իսէ մարիֆէթը Շէր իլէ կէրույէ լէտտ իլէ մահալլէրինէ թէսլիմ օլունա . վէ Միլլէթի մէրգուլէտէն պիրի այինլէրի իւղրէ ագտը նիքեան վէ Ֆէսիը նիքեան իտէճէք օլտըղլարընտա Պաթրիկ Միւմաիլէյն վէ եախոտ թային իտէճէկի վէքիլլէրի մարիֆէթի իլէ իճրա օլունուպ ախտր թարաֆտան միւտախէլէ իթալիլմէյէ . վէ Պաթրիկը Միւմաիլէյնին վէ Մէրխասալէրին վէ վէքիլլէրիննի մարիֆէթ վէ իճի եօզ իքէն կէրէք Տէրի Սասաթթիմտէ վէ կէրէք տաշրալէրտէ այինլէրինէ մուխալիֆ օլարագ ագտը նիքեան իտէն Փախասլէրին վէ եախոտ վէքիլլէրիննի հաղլէրինտէ լաղըմ կէլէն թէալիլլէրին իճրա իլլէտիքաէ քիմէանէ միւտախէլէ իլլէմէյէ . վէ ագտը նիքեան վէ ֆէսիը նիքեան մատտէսինտէ վէ այինլէրինէ միւթէալիլգ սայիր խուսուստէ միւնաղէա իտէն իքի Երիսթիան մապէյնլէրին Պաթրիկի Միւմաիլէյն վէ եախոտ վէքիլլէրի թահիլգ իտուպ այինլէրի՛ իւղրէ ըսլահ իլլէտիքաէ վէ քիլիսէլէրինտէ եէմին վիրուպ աֆօրօս իլլէտիքաէ գուղաթ վէ նիւվապ տախլ վէ թէարրուզ իթմէյէլէր . վէ Միլլէթի մէրգուլէյէ ալրէթ պօշամագ վէ ալրէթ իւղէրինէ ալրէթ ալմագ վէ դէվճէլէրի ֆէվթինտէն սօնկրա անճագ իւլ տէֆայէտէք թէէհիւլ իտուպ անտէն գիատէ թէէհիւլ իթմէք այինլէրինէ մուխալիֆ օլմաղլա օ մագուլէլէրէ բուխասթ վէրիլմէյուպ թէալիլ վէ կիւշիմալ օլունա . վէ այինլէրինէ մուխալիֆ օլարագ նիքեան իտէն

քէսանըն քիւրտէլերինէ կիրմէսի մուղայրի ային  
 օլտու դունտան օլ հալտէ ֆէվթ օլանլերըն ֆա-  
 վասլեր թարաֆընտան գալտըրըմասը գըմըն-  
 տա դուզաթ վէ նիւվլապ վէ սայիր դապըթան  
 թարաֆընտան ճէպը ու թէքլիֆ օլունմայա ,  
 վէ Մէրխասալէր վէ Եպիսկոպոսլէր վէ բահրդ-  
 լէր վէ քէշիշէր վէ սայիրէտէն պիրի քէնտու  
 այինլերի միւղթէդաընճա քիւրտէլերինէ վէ  
 ֆուգարալէրինէ վէ Պաթրիգլէրինէ պիր ազ շէյ  
 վէ հաթոտ սիւլիւս մալին վասիլէթ խոուպ ֆէվթ  
 օլաըզլէրինտէ վասիլէթլերի նաֆիզ վէ մադպուլ  
 օլուպ ային ու գայիտէլէրինճէ քէնտու միւլէթլէ-  
 րինտէն Երմէնի շահրալէր իլէ Շէր իլէ իսթիմա  
 օլունուպ վարիսլէրինտէն մարիֆէթ Շէր իլէ ալը  
 վէրիլէ վէ պիրա վարիս ֆէվթ օլան Մէրխասա-  
 լէրին վէ փափասլէրին վէ քէշիշէրին վէ գարա-  
 պաշլէրին վէ Մայրապետ թապիր օլունուր քէշի-  
 շէ ալըթլէրին կէրէք նուզուտ վէ կէրէք էշեա  
 վէ պարկիր վէ սայիր հէր նէ շէյլերի վար ի-  
 սէ Պաթրիգը մուժայիլէյն վէ հաթոտ թարա-  
 ֆընտան թային իտէճէկի վէքիւլէրի ախզ վէ  
 գապզ իլէտիքաէ Պէյթիւլմալ վէ Գասսամ վէ  
 Միւթէվէլիլէր վէ Մուհասսըլէր վէ սայիրէլէ-  
 րի թարաֆընտան միւտախէլէ օլունմայա , վէ  
 վէրէսլէրի մէվճուտ օլանլերին նուզուտ վէ  
 կէրէք սայիր էմվալ ու էշեալէրինէ Պաթրիգ  
 վէ վէքիւլէրի թարաֆընտան վալը հէտ գըլըն-  
 մայա . վէ այինլերինէ մուխալիֆ վազ ու  
 հարաքէթ իտէն Երմէնի Մէրխասալէրի  
 փափաս վէ քէշիշէրի Պաթրիգը միւժայիլէյն ա-  
 յինլերի իւզրէ թէ'տիւպ վէ սաշլէրին թրաշ վէ  
 քէնտուլէրին փափաս վէ գարապաշլըգտան ազ  
 ու իխրաճ իլէ քիւրտէլերին ախտէր վիրտիքաէ  
 վէ մուղթէգայի այինլերի իւզրէ տէֆ ու իխ-  
 րաճ օլունան փափասլէրին հէրինէ իղթիգա ի-  
 տէն փափասլէրին թայինի խուսուղնտա իա-  
 րիճտէն քիւրտէն մանի վէ միւղահիմ օլմահա .  
 վէ Պաթրիգը միւժայիլէյն Պաթրիգլիկինէ թա-  
 պի հէրլէրտէ օլան քիլիսա վէ մանասթըրլէրի-  
 նէ վէ քեաֆֆէի միւլթէմիլաթընա վէ սայիր  
 քիւրտէլերինէ վազֆ օլան էշեա վէ հայլալէ-  
 րինէ քիւրտէն թարաֆընտան միւտախէլէ օ-  
 լունմայուպ էօթէտէն պէրու օլա կէլախիկի վէճճ  
 իլէ գապթ ու թէսարրուֆ օլունա . վէ Երմէնի  
 միւլէթլերին էօթէտէն պէրու էտա իտէ կէլախիկի  
 բուսուժաթը միւրիլէ վէ սաստապա ազճէլէրի վէ  
 Պաթրիգլանէնին բուսուժաթ վէ մասարիֆաթը  
 վէ Պաթրիգլիգ այիտաթը քէմաքեան էտա օ-

լունուպ թէրէտախա վէ մուխալիֆէթ օլուն-  
 մահա . վէ քիւրտէ վէ մանասթըր վէքիւլէրի  
 Պաթրիգլիգ բուսուժընտան վէ բուսուժաթը մի-  
 րիլէտէն ախզ վէ էքլ իտէրլէր իտէ մուհասէ-  
 պէլէրի կէօրիւլիւպ թազմին իթտիրիլմէսինէ  
 քիւրտէն միւտախէլէ իլէմէյէ վէ իշպու բու-  
 սուժաթտան հէր գանղը մահալտէ օլուր իտէ  
 օլունա մէրխասալէրտէ վէ սայիր քէշիշէրտէ  
 Պաթրիգի միւժայիլէյն ալաճաղը օլորդտա  
 թահսիլի իշիւն էմրի շէրիֆի' վէրիւլպ քէն-  
 տու թարաֆընտան տախի մէքթուպի իլէ թա-  
 յին իտէճէկի առէմլէրինէ գուզաթ վէ նիւվլապ  
 թարաֆընտան Շէր իլէ մուտալէնէթ օլունուպ  
 թահսիլ իթտիրիլէ վէ Պաթրիգի միւժայիլէյն  
 քէնտուսի իշիւն օլան պազ մահասուլթընը վէ  
 սաստապա նամը իլէ Միւլէթի մէրգուճէնին վիր-  
 ալիքլէրի շիրէ վէ հազ վէ պալ վէ սայիր էշ-  
 եալէրի խանէսինէ նազլինտէ իսկէլէլէրտէ վէ  
 գափուլարտա թէտմիւլի գատիմինէ մուխալիֆ  
 կէօրիւլի իւմէնտար թարաֆընտան միւժանէ-  
 աթ օլունմահա . վէ Պաթրիգի միւժայիլէյն  
 վէ մէրխասալէրին վէ Եպիսկոպոսլէրին քէն-  
 տուլէրինէ վէ քիւրտէլերինէ մախսուս օլան էշ-  
 եալէրինտէն իսկէլէլէրտէ վէ գափուլէրտէ կէօմ-  
 րիւկ վէ բաճ թալէպ վէ ախզ իթտիրիլմէյէ .  
 վէ Երմէնի փափասլարընտան պիրի իզնի Շէր ի-  
 լէ հապս օլունմաղ լաղըմ կէլախիքաէ Պաթրիգի  
 միւժայիլէյն ալը գոլուպ ախէր թարաֆտան հապս  
 իթտիրիլմէյէ . վէ Եպիսկոպոսլէր իլէ պաղը քէ-  
 սանըն Շէրը շէրիֆէ միւթէալիպ սասլալէրի  
 Տէրի-սասալթիմէ հէվալէ օլունարազ շուրութ  
 վէ գուլուտլէրինէ միւրաճէաթլէ պէր վէճճ  
 հազգանիլթ ֆասլ վէ բուլթթ օլունա . վէ միւ-  
 ժայիլէյն Պաթրիգլիկի մէքթուլի պէր միւլալի  
 մէշրուճ շուրութի գատիմէսինէ թիպէթլէ գապթ  
 վէ թասարրուֆ խոուպ Պաթրիգլիկինէ միւ-  
 թէալիպ ումուրը խուսուղնտա վէճճէն մին էլ  
 վիճուճ սախլ ու թէտարրուզ գըլմահալէր , շէօյ-  
 լէ պիլէլէր ԱԼԵԱՄԵԹԻ շէրիֆիմէ իթիմաա գը-  
 լալէր : Թահրիլէն ֆիլ էէվմիւլ սասլի վէլ աշ-  
 րէյն մին շէհրի ճէմատիւլ ուլեա էստէնէ ահա-  
 տի վէ թիւսէյն վէ մուլթէն վէլ էլֆ :

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՊԵՐԱԹԻՆ

Կ. Պօլսոյ եւ շրջակայից Հայոց Պատրիարք  
 Մկրտիչ Եպիսկոպոսը հրաժեշտ տուած ըլլալով  
 Պատրիարքութենէ՝ հրաման ըրած էի . ուրիշ մը

կարգել . ուստի հաստատեալ ընտրական օրի-  
 նաց համաձայն Հայոց ազգին պաշտօն ունեցող  
 երկեւլիները ըստ սովորութեան Պատրիարքա-  
 բանը գումարուելով սոյն Արքայական հրովար-  
 տակս ընդունող Նիկոմիդիոյ Առաջնորդ եւ  
 Պատրիարքական Տեղագոյն Վարժապետեան  
 Ներսէս Եպիսկոպոսը ընդհանուր հաւանութեամբ  
 Պատրիարք ընտրուած եւ հանրագրութեամբ  
 նորա հաստատութիւնը խնդրուած ըլլալը իմ  
 կայսերական Վեհափառութեանս հաղորդուե-  
 ցաւ : եւ ըստ այնմ ընդունելով՝ 1291 Ռէպիւլ  
 էվլէլ ամսոյն 25 թուականին իմ արքայական  
 բարձր հրամանիս համաձայն պէտք եղածը գոր-  
 ծադրուած ըլլալով իր պաշտօնին մասին Ար-  
 քայական դիւանէս յետագայ պայմանները պա-  
 բունակող եւ իմ թագաւորական ձեռնագրովս  
 փալող սոյն Արքայական հրովարտակս տուի  
 իր ձեռքը եւ հրամայեցի որ , յիշեալ Վարժա-  
 պետեան Ներսէս Եպիսկոպոս Կ. Պօլսոյ եւ Ա-  
 նատօլուի եւ Բուժէլիի եւ շրջակայից Հայոց  
 Պատրիարքութեան պաշտօնը վարէ , եւ մինչեւ  
 որ իր Ազգին կրօնական եւ հաստատեալ օ-  
 րինաց հակառակ ընթացքի մէջ չը գտնուի ,  
 կամ կայսերական կառավարութեան դէմ ան-  
 հաւատարմութիւնը չը տեսնուի եւ կամ ինք  
 նին չը հրաժարի՝ ցկեանս վարէ այս պաշտօնը ,  
 եւ եթէ յիշեալ պարագաներուն մէկուն պատ-  
 ճառաւ հրաժարելը հարկ ըլլայ , այն ալ Սահ-  
 մանագրութեան յօդուածոց եւ տրամադրու-  
 թեան համաձայն գործադրուի , եւ Պատրիար-  
 քութեանը ներքեւ գտնուած Եպիսկոպոսունք  
 Առաջնորդը եւ Քահանայք զինքը Պատրիարք  
 ճանչնալով Պատրիարքութեան վերաբերեալ  
 գործոց մասին իրեն զիմեն եւ ըստ ամենայնի  
 հնազանդ գտնուին . եւ Պատրիարքութեանը  
 ներքեւ գտնուած առաջնորդ եւ քահանայ եւ  
 կրօնականները եթէ իրենց կրօնից համեմատ  
 հրաժարեցնելու կամ պաշտօնի մէջ հաստատե-  
 լու ըլլայ՝ ոչ ոք միջամտէ . եւ եթէ Առաջնորդ-  
 ներէն մէկուն փոփոխութիւնը հարկ ըլլայ , եւ  
 յիշեալ Պատրիարքին եւ Ազգային Ժողովին կըն-  
 քովը վաւերացեալ Թագրիբ մատուցուի , ա-  
 ռաջնորդական պայմանները պարունակող իմ  
 Բարձր Հրովարտակս տրուի եւ ուրիշի խնդրա-  
 նօք առաջնորդութիւն չտրուի , եւ սոյն Ա-  
 ռաջնորդներուն եւ Եպիսկոպոսներուն մասին  
 հրաժարեցուցման կամ արքայանայ կամ ամ-  
 բաստանութեան զիր գայ թէ Փաշաներէն թէ

Գաղաներէն թէ Նայիպներէն՝ մինչեւ որ յիշ-  
 եալ Պատրիարքէն չստուգուի , հաւատ չընծայ-  
 ուի . եւ եթէ որ եւ է եղանակաւ հին ու նոր  
 թուականաւ հրամանագիր ալ ելած ըլլայ , չը  
 յարգելով զայն՝ եւ քննութիւն ըլլալով պարտ  
 ու պատշաճը անօրինուի , եւ եթէ Առաջնորդ-  
 ներէն եւ Եպիսկոպոսներէն մէկը գործով մը  
 մայրաքաղաքս գալով իւր տեղ ուրիշ վարդա-  
 պետ մը փոխանորդ կարգելու ըլլայ՝ ոչ ոք հա-  
 կառակի . թէ Երեն եւ թէ Առաջնորդաց եւ Քա-  
 հանայից տուները եւ ընկալատեղիները ազա-  
 տութեան համաձայն կրօնական արարողութեան  
 եւ ասոր վերաբերեալ գործառնութեանց եւ  
 ոչ մէկ կողմէ մը արգելք եւ հակառակութիւն  
 եւ միջամտութիւն չըլլայ . եւ ի վաղուց անտի  
 իրենց սեպհականութիւնն եղած եկեղեցեաց եւ  
 վանօրէից եւ թէ մայրաքաղաքս եւ թէ դըր-  
 սերը գտնուած ուխտատեղեաց , եւ իրենց սո-  
 վորութեանը համաձայն մեռելոց յուղարկաւ-  
 րութեանը եւ ուրիշ կրօնական արարողութեան-  
 ցը ոչ ոք միջամտէ եւ արգելք յարուցանէ :  
 Յիշեալ Պատրիարքին եւ Ազգային Ժողովին  
 կընքովը մատուցեալ Թագրիբները յարգուե-  
 լով իրենց կրօնքին վերաբերեալ ինչ ինչի որ  
 ներկայացնեն եւ տեղեկագրեն գործադրուի .  
 եւ յիշեալ Ազգին յատկացեալ եկեղեցիները եւ  
 ուխտատեղիները առանց բարձրագոյն հրամանի՝  
 քննութեան եւ խուզարկութեան չենթարկուին  
 եւ հին դրից մէջ եւ ըստ սովորութեան ըլլա-  
 լիք նորոգութեանց արգելք չը յարուցուի . եւ  
 իրենց սեպհական եկեղեցիները պաշտօնական  
 գրութեամբ ուրիշ չը տրուի եւ ուրիշին պար-  
 տուցը համար եկեղեցեաց եւ վանօրէից գոյիցը  
 միջամտութիւն չըլլայ եւ իբրեւ գրաւ շառնուի .  
 եւ եթէ կերպով մը առնուած ալ ըլլայ՝ Շէրիֆ  
 օրինօք ետ առնուելով իր տեղերը տրուին . եւ  
 յիշեալ Ազգէն մէկը իրենց կրօնից համաձայն  
 ամուսնացնեն կամ ամուսնական կապը իւղեն ,  
 սոյն արարողութիւնը ըստ որում յիշեալ Պատ-  
 րիարքին կամ կարգած փոխանորդներուն մի-  
 շոցաւ ի գործ կը դրուի՝ ուրիշներուն միջամ-  
 տութեանը պէտք չէ թոյլ տալ . եւ առանց  
 յիշեալ Պատրիարքին կամ Առաջնորդներուն կամ  
 փոխանորդներուն գիտութեանը եւ արտօնու-  
 թեանը թէ մայրաքաղաքիս մէջ եւ թէ դրսերը  
 հակառակ իրենց կրօնին պսակ դնող քահանա-  
 յից կամ փոխանորդաց հարկ եղած պատիժը  
 տրուելու առին ոչ ոք միջամտէ . եթէ պսակ-



գրութեան կամ պատկի լուծման եւ կամ իրենց կրօնից վերաբերեալ խնդրոց մէջ երկու Քրիստոնեայ մէջ ունենան եւ Պատրիարքը կամ փոխանորդները քննելով ըստ կրօնի կարգադրեն եւ կամ եկեղեցիներուն մէջ երդմանցնեն կամ բանադրեն, Գառնները եւ Նայիպները չը միջամտեն, եւ որովհետեւ յիշեալ Ազգին կրօնքը կ'արդիւէ զիրենք որ կնաթողութիւն չընեն եւ կին ունեցողը ուրիշ կին չառնու, եւ կիներնին մեռնելէն վերջը միայն երեք անգամ կարենան ամուսնանալ եւ ոչ աւելի, հակառակ վարուողներուն արդելք եւ յանգիմանութիւն ըլլայ, եւ կրօնից հակառակ պատկ ձեւացնողներուն եկեղեցի մտնել արդիւեալ ըլլալուն նոյն վիճակին մէջ մեռնողները քահանայից միջոցաւ թաղուելու համար Գառնները Նայիպները եւ ուրիշ հրամանատարք չստիպեն եւ առաջարկութիւն չընեն, եւ Առաջնորդներէն եւ Եպիսկոպոս եւ վարդապետ եւ կրօնականներէն եւ ուրիշներէն մէկը եթէ իրենց գոյքէն քիչ մը բան կամ 1/3 մասը իրենց կրօնին համաձայն եկեղեցեաց եւ աղքատաց եւ Պատրիարքին կտակելով վախճանին՝ կտակը գործադրելի եւ ընդունելի ըլլալով իրենց կրօնից եւ օրինաց համաձայն Շէրիի միջոցաւ իրենց Ազգէն վկայներ մտիկ ընելով, մեռնողին ժառանգներէն առնուի եւ առանց ժառանգ ունենալու վախճանող Առաջնորդաց եւ Քահանայից եւ կրօնականաց եւ մայրապետաց թէ ստակ թէ կարասի թէ ձի եւ թէ ուրիշ ինչ որ կայ՝ եթէ Պատրիարքը կամ իր փոխանորդները առնելու ըլլան՝ Պէյթիւլուլի եւ Գասամի եւ Միւթէվէլիներու եւ Մուհարըներու կողմէն միջամտութիւն չըլլայ, եւ ժառանգ ունեցողաց ստակին եւ ընչից եւ գոյից՝ Պատրիարքը եւ փոխանորդները ձեռնամուխ չըլլան, եւ իրենց կրօնին հակառակ վարուող Հայ առաջնորդ եւ քահանայ եւ կրօնաւորները եթէ Պատրիարքը իրենց կրօնին համեմատ պատմէ եւ մօրութիւն անելով զիրենք եկեղեցական կարգէն լուծէ եւ իրենց եկեղեցիները ուրիշի տալով ուրիշներ կարգէ, դուրսէն ոչ ոք արդելք ըլլայ եւ նեղէ, յիշեալ Պատրիարքին պատրիարքութեան ներքեւ գրանուած անդերուն եկեղեցեաց եւ վանօրէից եւ բոլոր պարունակութեանց եւ եկեղեցեաց Ապոֆ եղած գոյից եւ անասնոց ոչ ոք ձեռնամուխ ըլլայ, եւ ի վաղուց ինչպէս որ էր նոյնպէս մնայ սեպհականութեան իրաւունքը:

Հայոց ազգը ինչպէս որ ի վաղուց նոյնպէս եւ այսուհետեւ պէտք է վճարէ արքունի տուրքը եւ ողորմութեան եւ Պատրիարքարանի տուրքը եւ ծախքը եւ պատրիարքութեան յատկացեալ ստակը եւ պէտք չէ հակառակիլ, եկեղեցեաց եւ վանօրէից փոխանորդները Պատրիարքական հասոյթը եւ Արքունի տուրքը ստանալով եթէ իւրացնեն՝ հաշիւներն տեսնուելով վճարել տալու միջոցին ոչ ոք միջամտէ, եւ այս հաշուէն որտեղի առաջնորդ կամ կրօնականէն որ ըլլայ՝ Պատրիարքը եթէ առնելիք ունենայ եւ ստանալու համար իմ բարձր հրամանադրովս եւ իր նամակովը կարգած անձանց՝ Գասար եւ Նայիպները ըստ Շէրիի ձեռնտու ըլլան եւ առնել տան, Պատրիարքին յատկացեալ այդիւի բերքը եւ նուէր անուսով Ազգին առած գինին եւ խղը եւ մեղրը եւ գոյքերը իր ընակարանը փոխադրուած միջոցին ի վաղուց անտի եղածին համաձայն նաւամատոյցները եւ դռները մաքսի պաշտօնէից կողմէ արդելք չը պատահի, եւ յիշեալ Պատրիարքին եւ Առաջնորդաց եւ Եպիսկոպոսաց վերաբերեալ եւ եկեղեցեաց յատկացեալ գոյքերէն նաւամատոյցները եւ դռները մաքս եւ բաժ չը պահանջուի եւ չառնուի, եթէ Հայոց քահանաներէն մէկը Շէրիի հրամանաւ բանտարկել հարկ ըլլայ, Պատրիարքը պահէ եւ ուրիշը չը բանտարկէ, եւ Եպիսկոպոսաց եւ ումանց Շէրիի վերաբերեալ ունեցած դատերին մայրաքաղաքս յանձնուելով ըստ արձանագրեալ արածութեանց արդարութեամբ քննութիւն ըլլայ եւ կարգադրուի:

Յիշեալ Պատրիարքը իր պաշտօնը վերողրեալ հաւանդ պայմանաց համաձայն վարէ, եւ իր պաշտօնին վերաբերեալ գործոցը որ եւ է կերպով ոչ ոք միջամտէ եւ հակառակիլ, այսպէս զխոսնան եւ իմ նուիրական ՆՇԱՆՍ յարդեն:

Ընթերցումն աւարտելէ ետեւ Նախագահ Սրբազանը յետագայ բարեմաղթութիւնն ըրաւ:

« Ամենախնամն Աստուած, թագաւորն թագաւորաց, որ ունի ի բոլին զսիրտս իշխանաց, հաճեցի երկարել զցանկալի կեանս Ա. Ե. հախառ Կայսեր մեր եւ անոր գահոյքը յաւիտեան անսասան պահել, նոյնպէս հաճեցի անոր Նախարարաց զօրութիւն եւ կարողութիւն պարզեւել, Ա. Ե. Կայսեր աշխարհաշէն զիտա-

ւորութիւնները յօգուտ ժողովրդոց գործադրելու:

« Ասոր հետ մէկտեղ պէտք է խնդրենք Աստուծմէ ամենքս ալ, որ մեր Հայոց Ազգը յաւիտեան պահպանէ իւր ամենազօր թեւոց տակ, եւ պարզեւէ մեզ ոգի խաղաղութեան, ոգի սիրոյ եւ միաբանութեան, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ամէն »:

Ժողովը ձայնակցեցաւ Նախագահ Սրբազանին այս սրտաղին բարեմաղթութեանց. եւ ապա իւրաքանչիւր ոք իր աթոռը բաղմեցաւ:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՔՆՆԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՈՅ ԱՉԳԱՅԻՆ ՆԱԻՐՆԹԱՅ ԱՆՅԵՑ

Ատենապետ էֆէնտին Օրակարգին անցնելով, Դիւանին կողմէ ներկայացուած սրբազրելի ցանկի մը վրայ երեսփոխանները հրաւրեց ի բուէարկութիւն:

Քուէհամարի քննիչ ընտրուեցան վիճակաւ Տ. Յովհաննէս Վարդ. ֆախաղեան Սիմոն էֆ. Նորատուկեան Մկրտիչ » Էսաեան Յարութիւն » Մարգարեան

Թիւ քուէարկուաց 38, Նախագահ Սրբազանով հանդերձ:

Կիւրճեան Մկրտիչ էֆէնտի կոչման ատեն քուէարկութեան չմասնակցեցաւ:

Նոյնպէս քուէարկութեան չը մասնակցեցան բացակայութեան պատճառաւ:

Այվատեան	Մեսրոպ	էֆ.
Արապեան	Սարգիս	»
Ժամակոչեան	Պօղոս	»
Կիւմիւշկէրտան	Ռուբէն	»
Տիլէեան	Մարտիրոս	»
Մարգարեան	Յարութիւն	»
Միսաքեան	Խաչատուր	»
Պէյրիկեան	Ռէթէոս	»
Այվազեան	Աբրահամ	»

Քուէհամարը կատարուելով, արդիւնքը քննչաց կողմէն Դիւանին հաղորդուեցաւ եւ Դիւանն ալ ժողովին ներկայացուց, ահա արդիւնքը:

Յակոբ Կոստանդ	էֆ. քուէ	33
Սախմարաճեան Գէորգ	»	35
Տ. Կարապետ Վ. Սերոբեան	»	26
Միքայէլեան Սիմոն	»	26

Էսաեան Մկրտիչ էֆ. քուէ 25  
Տ. Սիւքիաս քահանայ » » 22

Հետեւաբար Քննիչ մասնաժողովոյ ընտրութիւնը լրացաւ:

ՓՈՓՈԽԵԼԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԻ ՄԱՆՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Օրակարգն է Փոփոխելի Տրամադրութիւնք Սահմանադրութեան: Սահմանադրութեան մէկ քանի կէտերուն փոփոխութեան համար սակէ յառաջ՝ պատրիարքական ընտրութեան ատեն՝ Ազգային ժողովոյ որոշմամբ թագրիր գրուած է Վարչութեան կողմէն առ Բ. Դուռն. ինչպէս կը յիշեն անշուշտ երեսփոխանք. բայց այդ թագրիրին օրինակը ցարդ ժողովին ներկայացուած չըլլալուն համար, Դիւանս այժմ արժան դատեց անոր օրինակը կարգաւ. որպէս զի ժողովը՝ որ այժմ Վերաքննութեան խնդրոյն պիտի անցնի, տեղեկութիւն ունենայ թէ որ կէտերն են որ արդէն Բ. Դրան ներկայացուած են:

Ատենադպիր էֆէնտին կարգաց յիշեալ թագրիրին թարգմանութիւնը, որ ահա տասիկ:

« Օգոստալառ Կայսեր հրամանաւ հաստատեալ մեր Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբանքը չզպչելով անոր յօդուածները հետզհետէ փորձառութեամբ ի հարկին բարեփոխելու պայմանաւ, առ այժմ ինչ ինչ յօդուածոց վրայօք Ազգային ժողովը հետեւեալ բարեփոխութիւններն ըրած է. Ա. Սահմանադրութեան 36 եւ 39ԳԴ. յօդուածոց մէջ յիշուած Քաղաքական ժողովոյ անդամոց 20 թիւը 11ի, նմանապէս Վերաքննութեան Մասնաժողովոյ անդամոց 20 թիւը 12 ի իջուցած է: Բ. Ժողով կազմելու բանալու համար փոխանակ անդամոց մեծամասնութիւնը վնասելու՝ որոշեց արդէն ընտրուած եւ ժողովականութեան պաշտօնը ի գործ գնող ժողովականաց մեծագոյն մասը փնտուել, որով 39 եւ 27 եւ 40 եւ 38ԳԴ. յօդուածներն եւս բարեփոխեցան: Գ. Ազգային ընտր. ժողովոյ գումարման համար որ առաջ հրաւիրագիր զրկել տրամադրող 39 ԳԴ. յօդուածին վրայ աւելցուց նաեւ որ առանց հրաւիրագրեր ուղարկելու ալ՝ որ առաջ լրացրաց մի-

Ղոցաւ ծանուցուի ժողովակախոսաց : Կ. Սահմանադրութեան 63րդ. յօդուածը որ կը տրամադրէ թէ Ընդհանուր ժողովոյ կրօնական անդամք ընտրուելու համար հարկ է 5 տարուան ձեռնադրուած ըլլան, Ընչուեցաւ : Եւ որովհետեւ մեր Պատրիարքը ըստ 407. յօդուածոյ Սահմանադրութեան յատենի Ազգային ժողովոյ հանդիսաւոր ուխտ պիտի ընէ Տէրութեան եւ Ազգին հաւատարիմ մնալու, եւ Ազգային Սահմանադրութեան ճշդիւ գործադրութեանը հսկելու, այն ուխտը կատարելու կարող ըլլալու համար, որոշեց Ազգային ժողովը որ սոյն փոփոխեալ տրամադրութիւնքը Բ. Գրան մատուցանեմք եւ ներկայացնեմք, հետեւորար կը խնդրեմք որ պարտ ու պատշաճ գործադրութեան համար Բարձրագոյն հրամանը շնորհ ըլլայ :

1291 Բէպիւլ էվվէլ 25 եւ

1290 Նիսան 27

Իփէիճեմ Ա. ԷՖ. — Այդպիսի որոշում մ'եղած չէր . եւ կը դարմանամ թէ ինչպէս Վարչութեան դացեր եւ թագրեր եղեր է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Աէտք է յիշեցնեմ Իփէիճեման էֆէնտիին թէ որոշումն այս ժողովին մէջ եղած եւ նախորդ Գրանին կողմէն Վարչութեան հաղորդուած է : Բ. Գրան ներկայացնելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիտէք արդէն որ Սահմանադրութեան վերաքննիչ յանձնաժողովոյն տեղեկագիրն ասկէ առաջ ժողովիս կողմէն Նախաձեռնութեան դիւանին յղուած էր : Գիււանն իր նախաքննութիւնն աւարտած եւ իր տեղեկագիրը բերած է, որ պիտի կարդացուի այժմ :

Նախաձեռնութեան դիւանին տեղեկարեր Փախազեան Ստեփան էֆէնտիին կարդաց հետեւեալ տեղեկագիրը .

Վսեմախայլ Ատենապետ Ազգային ժողովոյ

Նախաձեռնութեան Գիււան Սահմանադրութեան վերաքննիչ յանձնաժողովոյ տեղեկագիրը նկատողութեան առնելով, կը համաձայնի այն զխտողութեանց, որոնցմով Յանձնաժողովը այս անգամի վերաքննութեան համար փորձառութեան պահանջած քանի մը տրամադրութեանց փոփոխութիւնը միայն ստիպողական համարելով կատարած է . առանց Սահմանադրութեան մէջ մեծ փոփոխութիւն մը մտադրելու, որուն համար միայն թէ Ազգային ժողովոյ եւ թէ Բ. Գրան հաւանութիւնն ստանալը երկար ժամանակի կարօտ կը համարի . եւ վերաքննութիւնն հարկ եղած ժամանակ կատարելու արամադրութիւնն աւելցնելով դիւրութիւն կուտայ Ազգային ժողովոյ՝ փորձառութեամբ հետզհետէ հարկ եղած վերաքննութիւնը կատարելու :

Նազրութեան մէջ մեծ փոփոխութիւն մը մտադրելու, որուն համար միայն թէ Ազգային ժողովոյ եւ թէ Բ. Գրան հաւանութիւնն ստանալը երկար ժամանակի կարօտ կը համարի . եւ վերաքննութիւնն հարկ եղած ժամանակ կատարելու արամադրութիւնն աւելցնելով դիւրութիւն կուտայ Ազգային ժողովոյ՝ փորձառութեամբ հետզհետէ հարկ եղած վերաքննութիւնը կատարելու :

Հետեւորար Գիււան Յանձնաժողովոյ առաջարկած ծրագրին բովանդակութիւնը, որոյ մէջ քանի մասերն արդէն Ազգային ժողովէջ ընդունուած եւ Բ. Գրան ներկայացուած են, կ'ենթարկէ Ազգային ժողովոյ քննութեանը եւ առաջին որոշմանը :

Իսկ նոյն ծրագրին վրայ հետեւեալ բարեփոխութիւնները կ'առաջարկէ .

1. Կրօնական եւ Քաղաքական եւ Տեսուչ Խորհուրդն անուանել, փոխանակ խորհուրդի :

2. Գործառն անուանել փոխանակ Գործառնախորհուրդի :

3. Հոգաբարձութեանց թիւն անորոշ թողուլ, եւ պէտք է ընտրել սահմանել :

4. Ատենան կազմելու համար պաշտօնի մէջ գտնուած անդամոց մեծամասնութիւնը կամ ասոր որոշող ձայնից միաքանութիւնը փնտուել :

Ասոնցմէ զատ Գիււանն կ'առաջարկէ նաեւ, Սահմանադրութեան 537 յօդուածին առաջին պարբերութիւնն այսպէս բարեփոխել .

«Վերաքննիչ թագ իր բնակիչաց կողմէն ընտրեալ թագային ժողովով մը կը ներկայանայ, որ կ'ընտրէ զթագ . խորհուրդը, եւ անոր համարատուութիւնն առնելով կեդրոնական Վարչութեան կը հաղորդէ :

20 Դեկտ. 1874

Գ. ԱՏԵՆԱՊԵՏ

«Ի Բաց ուեւել Թաղայն խորհուրդն առաջարկութիւնը»

Ս. Գ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆՅ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սահմանադրութեան փոփոխելի տրամադրութեանց վրայ վիճաբանութիւնը բացուած է . Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրագրին ու տեղեկագիրն արդէն ստացած էք . այժմ ալ առ Բ. Գրան գրուած թագրին ու Նախաձեռնութեան դիւանին տեղեկագիրը լսեցիք՝ հիմա խօսք ուղղութեան կարգաւ խօսք պիտի տամ . բայց պէտք է յիշեցնեմ թէ Կանոնադրութեան 667-ը յօդուածին համաձայն, խօսքը նախապէս ծրագրին ընդհանրութեան վրայ է, — խօսքը նախապէս Սրբազանին է :

ՆԱՍԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ . — Այդ տեղեկագրին մէջ քանի կէտերը հաւանելի կը գտնեմ : Իմ հաշիւով զլիսաւոր կէտերէս մէկն է Վարչական Խորհրդոց եւ Հոգաբարձութեանց թիւերուն չափաւորիլը կամ բնաւ չսահմանուիլը . որ շատ աղէկ է . որովհետեւ թիւն որչափ քիչ լինի, այնչափ դիւրաւ գործ կը տեսնուի, հէրիք է որ արժանաւոր անձինք ընտրուին : Մէյ մ'ալ Թագական ժողով հաստատուելու առաջարկութիւնը աղէկ կը գտնեմ . ես կը կարծեմ որ թագին պատուաւոր եւ փորձառու անձերէն իրրեւ Յերակոյտ այս ժողովները պէտք է որ հաստատուին . որ Թագական խորհրդոց վրայ հսկեն, եւ անոր ձեռնհասութեանն վեր եղած ինքիւրները լուծեն . Վարչութեան կողմէն խաղաղարար ըլլան թագին մէջ . եւ թագին Պէտքէն իրենք տալէ, որպէս զի Թագական խորհուրդներն ըստ այնմ ծախք ընեն, եւ անկէ աւելի ծախք ընել եթէ հարկաւորի, նոյն Յերակոյտին դիմեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքն Իւթիւճեան էֆէնտիին է :

ԻԻԹԻԻՃԵՄ Ա. ԷՖ. — Այդ կատարուած վերաքննութիւնն ըստ իմ կարծեաց թերի է . որովհետեւ Ազգային ժողովոյս պաշտօնավարութեան ընթացքին մէջ շատ անգամ զխտողութիւններ եղած են Սահմանադրութեան ինչ ինչ կէտերուն վրայ, որ կը պակսին առաջարկեալ ծրագրին մէջ : Գլխաւորապէս կէտ մը կը յիշեմ որ Սրբազան Պատրիարք Հօր ընտրութեան օրն երեւան ելաւ եւ որուն վրայ բաւական վէճ ծագեցաւ . այն է Համագումար Եկեղեցական ժողովոյ Պատրիարքական ընտրելեաց ցանկին պատրաստութեան կէտը : Սահմանադրութիւնը կը տրամադրէ որ Համագումար ժողովոյ իւրաքանչիւր անգամը թուղթի մը վրայ պիտի գրէ այն ամեն կախկոտաց անունները՝ զորս կրօնական մասին անընդունելի չը հասարիք, եւ ասոր հետ կը յաւելցնէ նաեւ թէ գաղանի ջուէով պիտի պատրաստուի Պատրիարքական ընտրելեաց ցանկը : Ըստ այսմ վերջին Պատրիարքական ընտրութեան ատեն գուժում մեր Եկեղեցական Հայրերը գաղանի ջուէով ցանկ մը շինելով մէկ քանի կախկոտացներ այդ ցանկէն դուրս ձգած էին, երբ այդ ցանկը Թողովին բերին՝ կարծուեցաւ թէ դուրս մընացող կախկոտացները կրօնական մասին կատարելի եւ անընդունելի թէ Սահմանադրութեան մէջ այս մասին եղած տրամադրութիւնը կամ մտթ է եւ կամ հակասական, բացատրութեան կարօտ է ըսուեցաւ եւ վերաքննութեան մնաց : Ահա՛ վերաքննելի կարեւոր կէտ մը . կարելի է թէ դեռ օրիշներ ալ գտնուին : Աւստի ես կ'ըսեմ թէ ասոնք ալ նկատողութեան առնուելով տեղեկագրին մէջ անփոփոխելու էին : Սա ալ պէտք է յիշեցնեմ որ Խրիմեան սրբազանի կողմէն իւր Պատրիարքութենէ հրաժարման միջոցին Սահմանադրութեան ինչ ինչ անորոշագրելի կէտերու մասին զխտողութիւններ եղան, եւ ժողովս ալ 1875 Յոգոստոս 24 ի նստին մէջ ընդունեց եւ որոշեց նկատողութեան առնուլ զանոնք իւր օրակարգն անցունելով : Այս որոշումն ալ անորոշագրելի մնաց այն ժամանակէն ի վեր, պէտք է որ գործադրուի, քանի որ առաջարկողը պատրիարք մ'էր : Աւստի կ'առաջարկեմ որ հարցուի հրաժարեալ Պատրիարքին թէ ի՞նչ էին իւր զխտողութիւնները . կարելի է թէ այնպիսի կարեւոր կէտեր ըլլան զորս ժողովը նըկատողութեան արժանի դատի եւ ընդունի կամ մերժէ զանոնք իւր քուէով :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պարտ կը համարեմ յիշեցնել Իւթիւճեան էֆէնտիին՝ որ ըստ Կանոնադրութեան իւր առաջարկութիւնները պէտք է գրաւոր տայ Գիււանին : — Խօսքը Քրիստոսաւոր էֆէնտիին է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Թէեւ Սահմանադրութեան փոփոխելի տրամադրութեանց Յրագրին վրայ ընդհանուր կերպով վիճաբանութիւն ըլլալու էր, բայց քանի որ մանրամասնութեան մէջ օրիշներ մտան, ես ալ անոնց պիտի պատասխանեմ : — Կ'առաջարկուի թէ Թագական խորհուրդներէն զատ Թագական ժողովներ ալ ըլլան . Սրբազան Հայրը շատ աղէկ գիտէ թէ որչափ դժուարութիւն, չըսեմ թէ անկարելութիւն կայ դուրսերը Թագական ժողով ընտրելուն եւ անկէ օգուտ քաղելուն մէջ . վասն զի Նորին Սրբազանութիւնը քիչ շատ գաւառներն այցելուութիւններ ըրած է, եւ ալ բաւական տեղեր պըտրտած եմ եւ զիտեմ թէ որչափ դիւր կան

կը Թողովին բերին՝ կարծուեցաւ թէ դուրս մընացող կախկոտացները կրօնական մասին կատարելի եւ անընդունելի են . ասոր համար բաւական յուզմունք ծագեցաւ եւ հարցումներ եղան Եկեղեցական Հայրց : Այս կէտն այն ատեն ամենուս աչքին զարնուելով եւ տեսնուելով թէ Սահմանադրութեան մէջ այս մասին եղած տրամադրութիւնը կամ մտթ է եւ կամ հակասական, բացատրութեան կարօտ է ըսուեցաւ եւ վերաքննութեան մնաց : Ահա՛ վերաքննելի կարեւոր կէտ մը . կարելի է թէ դեռ օրիշներ ալ գտնուին : Աւստի ես կ'ըսեմ թէ ասոնք ալ նկատողութեան առնուելով տեղեկագրին մէջ անփոփոխելու էին : Սա ալ պէտք է յիշեցնեմ որ Խրիմեան սրբազանի կողմէն իւր Պատրիարքութենէ հրաժարման միջոցին Սահմանադրութեան ինչ ինչ անորոշագրելի կէտերու մասին զխտողութիւններ եղան, եւ ժողովս ալ 1875 Յոգոստոս 24 ի նստին մէջ ընդունեց եւ որոշեց նկատողութեան առնուլ զանոնք իւր օրակարգն անցունելով : Այս որոշումն ալ անորոշագրելի մնաց այն ժամանակէն ի վեր, պէտք է որ գործադրուի, քանի որ առաջարկողը պատրիարք մ'էր : Աւստի կ'առաջարկեմ որ հարցուի հրաժարեալ Պատրիարքին թէ ի՞նչ էին իւր զխտողութիւնները . կարելի է թէ այնպիսի կարեւոր կէտեր ըլլան զորս ժողովը նըկատողութեան արժանի դատի եւ ընդունի կամ մերժէ զանոնք իւր քուէով :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պարտ կը համարեմ յիշեցնել Իւթիւճեան էֆէնտիին՝ որ ըստ Կանոնադրութեան իւր առաջարկութիւնները պէտք է գրաւոր տայ Գիււանին : — Խօսքը Քրիստոսաւոր էֆէնտիին է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Թէեւ Սահմանադրութեան փոփոխելի տրամադրութեանց Յրագրին վրայ ընդհանուր կերպով վիճաբանութիւն ըլլալու էր, բայց քանի որ մանրամասնութեան մէջ օրիշներ մտան, ես ալ անոնց պիտի պատասխանեմ : — Կ'առաջարկուի թէ Թագական խորհուրդներէն զատ Թագական ժողովներ ալ ըլլան . Սրբազան Հայրը շատ աղէկ գիտէ թէ որչափ դժուարութիւն, չըսեմ թէ անկարելութիւն կայ դուրսերը Թագական ժողով ընտրելուն եւ անկէ օգուտ քաղելուն մէջ . վասն զի Նորին Սրբազանութիւնը քիչ շատ գաւառներն այցելուութիւններ ըրած է, եւ ալ բաւական տեղեր պըտրտած եմ եւ զիտեմ թէ որչափ դիւր կան





Գ Ի Ն 2 Ղ Ր Ո Ւ Շ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍԼՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ճախուշի ի Դիշանառան Պատրիարքարանի , և կը գտնուշի  
Եկեղեցեաց բանկաւները :